



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան
25 հունիսի 2020թ.

ԲԴԽ-39-Ո-Կ-11

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բարձրագույն դատական խորհուրդը, ծանոթանալով Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ «Դատավորի թեկնածուին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2020 թվականի հունիսի 15-ի թիվ N-Կ-8/2020 որոշմանը և կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել փաստաբան Հովհաննես Խուդոյանի կողմից Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին ներկայացված հաղորդումը՝ դատավորի թեկնածուի հավակնորդ Կարապետ Բադալյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին:

Ուսումնասիրելով նշված հաղորդումը՝ Հանձնաժողովն իր 04.05.2020թ. որոշմամբ դատավորի թեկնածու Կարապետ Բադալյանի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ:

Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի 15.06.2020թ. թիվ N-Կ-8/2020 որոշմամբ միջնորդություն է ներկայացվել

Բարձրագույն դատական խորհրդին՝ Դատավորի թեկնածուին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով և 150-րդ հոդվածի 1-ին մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց .

Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից ներկայացված՝ դատավորի թեկնածու Կարապետ Բադալյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննության կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի նիստը նշանակել 2020 թվականի հուլիսի 6-ին, ժամը 14³⁰-ին՝ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում /ք. Երևան, Կոյունի 17/:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ